Ռ. Լ. ՄՈՎՍԻՍՅԱՆ. Կուսակցության ղեկավար դերի աճը կոմունիստական շինարարության արդի էտապում. Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, Երևան, 1972, 300 էջ

Բանվոր դասակարգի առաջավոր ջոկատի՝ հեղափոխական կուսակցության ղեկավար դերի հարցն առաջնային տեղ է գրավում սոցիալիստական հեղափոխության, պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման ու ամրապնդման, հասարակությանը սոցիալիստական ու կոմունիստական հիմունքներով հեղափոխաշանորեն վերափոխելու գործում։ Այն մարքս-լենինյան տեսության կենտրոնական պրոբլեմներից մեկն է, որի բոլոր հիմնական ասպեկտները բազմակողմանիորեն լուսաբանված են Մարքսի, Էնգելսի, Լենինի աշխատություններում, կուսակցության համագումարների, կոնֆերանսների, պլենումների որոշումներում և բազմաթիվ այլ փաստաթղթերում։

ՍՄԿԿ XXIV համագումարը նոր, խոշոր ներդրում կատարեց կուսակցության ղեկավար դերի և կոմունիստական շինարարության արդի էտապում այդ դերի աճի ուսումնքի մեջ, այն բարձրացնելով մի նոր աստիճանի։

Կուսակցության ղեկավար դերի և կոմունիստական շինարարության արդի էտապում նրա աճի պրոբլեմը միշտ էլ գտնվել է պատմա-կուսակցական և հասարակական մյուս գիտությունների կենտրոնակետում։ Վերջին տարիների ընթացքում այդ հարցի մասին լույս են տեսել հարյուրավոր աշխատություններ և վիթխարի քանակությամբ հոդվածներ։ Այդ պրոբլեմին, բնականաբար, անդրադարձել են նաև հայ գիտնականները։ Սակայն կուսակցության ղեկավար դերի և կոմունիստական շինարարության ընթացքում դրա աճի մասին հատուկ ուսումնասիրություններ դեռևս չկան։ Գրախոսվող աշխատությունն առաջին փորձն է, որում հայերեն շարադրվում են կոմունիստական կուսակցության ղեկավար դերի մասին մարքս-լենինյան տեսության հիմնական դրույթները, բացահայտվում կոմունիստական շինարարության պրոցեսում այդ դերի հարաճումը և ցույց տրվում այն մեծ ներդրումը, որ կատարեց այդ բնագավառում ՍՄԿԿ XXIV համագումարը։

Աշխատության ներածությունում հիմնավորվում է թեմայի արդիականությունը, գործնական և տեսական նշանակությունն առհասարակ։ Տրվում է նաև օգտագործված աղբյուրների և գրականության համառոտ տեսություն։

Աշխատության առաջին գլխում Ռ. Մովսիսյանը ամենից առաջ հիմնավորում է այն միտքը, որ պրոլետարիատի հեղափոխական կուսակցության ստեղծումը պատմական անխուսափելիություն և անհրաժեշտություն է, որը պայմանավորված է բանվոր դասակարգի համաշխարհային-պատմական միսիայով։ Նա համառոտակի շարադրում է Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի հիմնարար դրույթները բանվոր դասակարգի հեղափոխական կուսակցության ստեղծման անհրաժեշտության, նրա դերի ու խնդիրների մասին։ Այդ առնչությամբ քննադատվում է ժամանակակից ռևիզիոնիստների, մասնավորապես իտալական «մանիֆիստո» խմբի պարագլուխ Ռ. Ռոսանդայի այն պնդումը, թե, իբր, Մարքսը կուսակցության մասին ուսմունք չի ստեղծել և անհրաժեշտ չի համարել, որ պրոլետարիատն ունենա ինքնուրույն քաղաքական կուսակցություն։ Այնուհետև հեղինակը բացահայտում է նոր տիպի մարքսիստական կուսակցության մասին լենինյան ուսմունքի էությունը, լուսաբանում նրա քաղաքական, կազմակերպական և գաղափարական հիմունքները, ստրատեգիայի ու տակտիկայի գլխավոր սկզբունքները, որոնք գիտական մեծ խորաթափանցությամբ հիմնավորել է Վ. Ի. Լենինը։ Աշխատությունում բացահայտվում են մարքս-լենինյան կուսակցության ղեկավար դերը պայմանավորող օբյեկտիվ պայմանները՝ ինչպես իշխանության համար մղվող պայքարում, այնպես էլ սոցիալիզմի ու կոմունիզմի կառուցման ժամանակաշրջանում։ Հեղինակը հատուկ ուշադրություն է դարձնում հասարակական զարգացման օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների փոխհարաբերության վերլուծությանը։

Աշխատության երկրորդ գլխում հիմնավորվում է այն կարևոր սկզբունքը, թե ինչո՞ւ է քաղաքական ստրատեգիայի ու տակտիկայի և ընդհանրապես քաղաքականության մշակումը հանդիսանում մարքս-լենինյան կուսակցության ղեկավար դերի իրականացման ու ապահովման

Բայկնոր և ինչո՞ւ է դեկավարությունը սկսվում քաղաքականության մշակումից, ինչո՞ւ սոցիալիզմի պայմաններում կուսակցության քաղաքականությունը սովետական հասարակության զարգացման կենսական հիմքն է։

Մարքսիստ-լենինյանների համար քաղաքականությունը վերացական բնույթ չունի. այն կոնկրետ է, արտահայտում է հասարակական որոշակի ուժերի շահերը և խարսխվում է որոշակի սկզբունքների ու պահանջների վրա։ Ելնելով այդ դրությունից՝ աշխատությունում մանրամասնորեն լուսաբանվում են կոմունիստական կուսակցության քաղաքականության գլխավոր սկզբունքները։

1. Կոմունիստական կուսակցության քաղաքականության առանձնահատկությունը ամենից առաջ գիտականությունն ու օբյեկտիվությունն է։ Որպեսզի այն ճիշտ լինի, արտահայտի բանվոր դասակարգի և բոլոր աշխատավորների շահերը, կանխագծի հասարակության զարգացման հեռանկարները, պետք է լինի օբյեկտիվ իրականությունից, դասակարգային ուժերի հարաբերակցությունից, արտաքին ու ներքին պայմաններից, ամեն մի երկրի առանձնահատկություններից և այլն։ Լենինի արտահայտությամբ՝ քաղաքականությանը պետք է վերաբերվել որպես գիտության ու արվեստի։

2. Կոմունիստական կուսակցության քաղաքականության մյուս կարևոր առանձնահատկությունը նպատակասլացությունն է։ Քաղաքականությունը կոչված է պատմական ամեն մի էտապում ճիշտ որոշելու կուսակցության կողմից լուծվող հարցերից գլխավորը, նշելու հիմնական օղակը։ Դրախտվող դրքում կոնկրետ փաստերով ցույց են տրվում պատմական տարբեր էտապներում կուսակցության քաղաքականության գլխավոր օղակները։

3. Մարքս-լենինյան կուսակցության քաղաքականության կարևոր առանձնահատկություններից է սկզբունքայնությունը, որն արտահայտվում է քաղաքականության դասակարգային բնույթի, գործնականության մեջ։

4. Կոմունիստական կուսակցության քաղաքականության չափազանց կարևոր առանձնահատկություններից է ճշմարտացիությունը, որում դրսևորվում է նրա մեծ ուժը։ Հեղինակը ցույց է տալիս, թե ինչպես է կուսակցությունը միշտ ձգտել և ձգտում է, որ իր քաղաքականության մեջ չլինի խղում խոսքի և գործի միջև, պայքարել և պայքարում է երկերեսանիության, կեղծավորության, խարեբայության դրսևորումների դեմ։

5. Կոմունիստական կուսակցության քաղաքականության հիմնարար սկզբունքներից մեկը տեսության և պրակտիկայի միասնության պահպանումն է։ Ուսումնասիրությունում հիմնավորվում է պրակտիկայի դերը տեսական ճիշտ ընդհանրացումներ կատարելու գործում, ինչպես նաև տեսական ճիշտ ընդհանրացումների նշանակությունը կուսակցության պրակտիկ գործունեության համար։

6. Իշխանության գրավումից հետո կոմունիստական կուսակցության քաղաքականության մեջ վճռական և տարածային դեր են ստանում տնտեսական հարցերը։ Հեղինակը նախ բացատրում է սոցիալիզմի պայմաններում քաղաքականության և տնտեսության փոխհարաբերությունը, ապա ցույց տալիս թե ինչո՞ւ են տնտեսական հարցերը կուսակցության քաղաքականության մեջ գրավում առաջնային տեղ։

Նշելով կուսակցության քաղաքականության կարևոր սկզբունքները, հիմնավորելով դրանք Վ. Ի. Լենինի աշխատություններով և կուսակցական որոշումներով, Ռ. Մովսիսյանը ցույց է տալիս թե իր քաղաքականությունը մշակելիս կուսակցությունը անցյալում ինչպես է ղեկավարվել այդ սկզբունքներով և ինչպես է այն մշակում այժմ։ Այդ կապակցությամբ նա հատուկ ուշադրություն է դարձնում ՍՄԿԿ XXIV համագումարի մշակած քաղաքականության առանձնահատկությունների և բնույթի վրա։

Աշխատության երրորդ գլխում Ռ. Մովսիսյանը ցույց է տալիս կուսակցական ղեկավարման եղանակները ու մեթոդները, ինչպես նաև կոմունիստական շինարարության արդի փուլում դրանք կատարելագործելու ուղիները, ելակետ ունենալով ՍՄԿԿ XXIV համագումարի դիրեկտիվները։

Քաղաքականության մշակումից հետո կուսակցության ղեկավար դերի իրականացման հաջորդ փուլը ժողովրդական մասսաներին քաղաքականության ճշտության մեջ համոզելն է, այն իրականացնելը, նրանց սեփականությունը դարձնելը։ Մանրամասնորեն լուսաբանելով կուսակցության ղեկավարության այդ ձևի առանձնահատկությունները, հեղինակն այդ կապակցությամբ մեծ ուշադրություն է դարձնում ժողովրդական մասսաների հետ կուսակցության կապի ամրապնդման պրոբլեմին՝ ինչպես անցյալում, այնպես էլ այժմ։

Կուսակցության ղեկավար դերի իրականացման ամենավճռական պայմաններից մեկը կուսակցության կուռ կազմակերպությունն է, նրա կազմակերպական բարձրացուն սկզբունքի՝ դեմոկրատական ցենտրալիզմի ամրապնդումն ու զարգացումը. ներկուսակցական դեմոկրատիզմի ձավալուսը։ Աշխատության մեջ հիմնավոր կերպով քննարկվում են ցենտրալիզմի և դեմոկրատիզմի բնույթն ու էությունը, նրանց դիալեկտիկական միասնությունն ու փոխադարձ պայմանավորվածությունը։ Մեծ ուշադրություն է դարձվում նաև քննադատության և ինքնաքննադատության դերի ու նշանակության, միասնական գիտակցական կարգապահության հարցերին։

Կուսակցության քաղաքականությունը կյանքում կենսագործողները սկզբնական կուսակցական կազմակերպություններն են։ Աշխատության մեջ մանրամասնորեն լուսաբանվում են սկզբնական կուսակցական կազմակերպությունների դերն ու անելիքները, նրանց աշխատանքի մեթոդների բարելավման ուղիները։

Կուսակցության ղեկավար դերի մասին լենինյան ուսմունքի մեջ առանձնահատուկ տեղ են գրավում կադրերի ճիշտ ընտրությունն ու տեղաբաշխումը. նրանց անհատական պատասխանատվության բարձրացումը, կատարված աշխատանքի ստուգումը և այլն։ Այդ հարցերը լուսաբանելիս գրախոսվող աշխատության հեղինակը մեծ ուշադրություն է դարձնում կադրերի պատրաստման, վերապատրաստման և դաստիարակության խնդիրներին։ Մանրամասնորեն ուսումնասիրելով Վ. Ի. Լենինի գիտական ժառանգությունը, Ռ. Մովսիսյանը կարողացել է ընթերցողին ներկայացնել կուսակցության կադրային քաղաքականության ամբողջական պատկերը։ Նա ընդգծում է այն հանգամանքը, որ Վ. Ի. Լենինը հատկապես մեծ պահանջներ էր ներկայացնում կուսակցության ու պետության ղեկավար կադրերի, մասնավորապես քաղաքական դեկավարների ընտրությանը։ Համաձայն Վ. Ի. Լենինի կադրային քաղաքականության, գրում է հեղինակը, ղեկավար կադրերը «պետք է ունենան տնտեսական բարձր պատրաստականություն, համառություն, սկզբունքայնություն, հասարակական զարգացման բարդ պրոցեսների լուծման ժամանակ կողմնորոշման մեծ ուժ և նախաձեռնություն, լինեն ավելի համբերատար, ավելի զգույշ. ավելի լոյալ, ավելի քաղաքավարի, ավելի ուշադիր դեպի ընկերները, զերծ լինեն քմահաճությունից, կոպտությունից, սուբյեկտիվիզմից և այլն։ Միայն այդ հատկություններով օժտված ղեկավարները կարող են ճիշտ և զգուշորեն օգտվել իրենց տրված բավականաչափ մեծ իրավունքներից ու իշխանությունից, որը ղեկավարի անկապտելի հատկությունն է»։ (էջ 147—148)։

Վ. Ի. Լենինը կուսակցական և պետական ղեկավարման բարձրացուն սկզբունքը համարում էր կոլեկտիվությունը։ Աշխատության մեջ վերլուծվում է կուսակցության պայքարը ղեկավարման այդ սկզբունքի հետևողական կիրառման համար։ Հեղինակը անդրադառնում է նաև կուսակցության միասնության պահպանման ու ամրապնդման հարցերին։

Գրախոսվող աշխատության չորրորդ գլխում վերլուծվում են կոմունիստական շինարարության արդի փուլում կուսակցության ղեկավար դերի աճը պայմանավորող արտաքին ու ներքին, տնտեսական ու սոցիալական, քաղաքական ու գաղափարական գործոնները։ Անդրադառնալով տրդի շրջանի կուսակցության ղեկավար դերի աճի դրսևորումներին հասարակական կյանքի տարբեր բնագավառներում, Ռ. Մովսիսյանը մանրամասնորեն լուսաբանում է հետևյալ հարցերը՝ կուսակցության ղեկավար դերի աճը սոցիալիստական տնտեսության և սոցիալիստական հասարակության սոցիալ-քաղաքական զարգացման բնագավառում։ Նա բացահայտում է զարգացած սոցիալիզմի տնտեսական առանձնահատկությունները, շարադրում կուսակցության ղեկավար գործունեությունը կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման ուղղությամբ. խոսելով անցյալի մնացուկների մասին, Ռ. Մովսիսյանը խստորեն քննադատում է մանրբուրժուական անհատապաշտությունը, կաշառակերությունը, սոցիալիստական սեփականության նկատմամբ ոչ-կոմունիստական վերաբերմունքը և այլն։ Նա հիշեցնում է Վ. Ի. Լենինի հետևյալ խոսքերը. «եթե կա մի այնպիսի երևույթ, ինչպիսին կաշառքն է, եթե կաշառքը հնարավոր է, ապա քաղաքականության մասին խոսք չի կարող լինել։ Այստեղ քաղաքականությանը մերձեցում անգամ չկա, այստեղ չի կարելի քաղաքականություն կենսագործել, որովհետև ձեռնարկած բոլոր միջոցները կախված կլինեն օդի մեջ և բացարձակապես ոչ մի հետևանքի չեն հասցնի։ Օրենքի հետևանքն ավելի վատ կլինի, եթե օրենքը գործնականապես կիրառվի կաշառքի թույլատրելիության և տարածվածության պայմաններում։ Այսպիսի պայմաններում չի կարելի ոչ մի քաղաքականություն իրագործել. այստեղ չկա այն հիմնական պայմանը, որ կարելի լինի քաղաքականությամբ զբաղվել»[1]։ Բերելով Վ. Ի. Լենինի այս հանճարեղ տողերը,

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 72—73։

Ռ. Մովսիսյանը գրում է. «Հազիվ թե կարելի է կասկածել, որ Լենինի պահանջը ոչ մի կերպով իր ուժը չի կորցրել արդի պայմաններում։ Մանրբուրժուական անհատապաշտությունն իր բոլոր դրսևորումներով կոմունիստական շինարարության արդի էտապում ներքին ամենավտանգավոր և ամենամասակար ուժն է։ Այդ պատճառով էլ, ըստ իս, նրա դեմ մղվող պայքարը պետք է դիտվի որպես կոմունիզմի կատաղի թշնամու դեմ մղվող պայքար։ Այն պետք է դարձնել հասակուսակցական և համաժողովրդական գործ, դաստիարակչական աշխատանքի ուժեղացման հետ միասին, վճռականորեն ուժեղացնել նաև վարչական պայքարը, բռնության կիրառումը» (էջ 258—259)։

Վերոհիշյալ գլխում հեղինակը անդրադառնում է նաև միջազգային զարգացման պրոբլեմների լուծման ընդհանուր կուսակցության դերի աճին, վերլուծում կուսակցության լենինյան արտաքին քաղաքականության սկզբունքները և տալիս ՍՄԿԿ-ի պրակտիկ պայքարը այդ սկզբունքների կենսագործման համար։ Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում սոցիալիզմի համաշխարհային սիստեմի ամրապնդման գործում ՍՄԿԿ-ի գործունեության լուսաբանմանը։

Աշխատության վերջում համառոտակի բացահայտվում է կուսակցության ղեկավար դերի մասին ուսմունքի շուրջը տեղի ունեցող գաղափարական-քաղաքական պայքարի բնույթը, ցույց տրվում, թե ինչո՞ւ է այդ հարցը արդի շրջանում դարձել մարքսիստ-լենինյանների և ռևիզիոնիստների միջև մղվող պայքարի կենտրոնակետը։

Ռ. Մովսիսյանի դրախոսվող աշխատությունը ունի դիտաքաղաքական նշանակություն։ Այն շարադրված է դիտական բարձր մակարդակով, բանիմացությամբ և, անշուշտ, զգալի ներդրում է տվյալ պրոբլեմի ուսումնասիրության գործում։

Ուսումնասիրությունը շատ ավելի շահած կլիներ, եթե այն շարադրվեր ՀԿԿ պատմության նյութերի հիման վրա։ Ցավոք, դրախոսվող մենագրությունը գրված է արդեն գիտական շրջանառության մեջ գտնվող, հանրահայտ նյութերի հիման վրա, նրա որոշ թեզեր կրում են վերացական բնույթ։ Աշխատության կարևոր թերություններից մեկն էլ այն է, որ նրանում հեղինակը փաստորեն շրջանցել է պրոբլեմի պատմագրությունը։

Լ. Ա. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր